

ԿԱԹՈՂՒԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շար. տես Բազմավէպ 1930 էջ 82)

Դ. Բագրատունեաց յրչան: — Մեր ազգաշէն ու եկեղեցաշէն Բագրատունիք ոչ միայն նորոգեցին եպիսկոպոսաց երբեմն ստացած իրաւունքն ընտրութեանց մէջ, այլ աւելի ևս ընդլայնեցին զայն, ի սկզբարան իրենց իշխանութեան՝ անոնց թողով նշանակել Լուսաւորչի աթոռին վրայ զանոնք՝ զորս յարմարագոյն կը դատէին: Այսպէս Ասողիկ կ'աւանդէ՝ Թէ 855ին «սպարապետն Սմբատ հրամայէ ժողովել եպիսկոպոսաց և ձեռնադրել կաթողիկոս զՋաւարիս»¹: Նոյնը կը կրկնէ և Յովհաննէս, ժողովը դնելով «ի զիւրաքաղաքն Երազգաւորս»²: Յայտնի է՝ որ Սմբատայ հրամանը ժողովման կը վերաբերի, և կապ չունի ընտրելոյն անձին հետ, որ եպիսկոպոսաց ազատ ընտրութեան թողուած կը թուի րացատրութեանը մէջ, և որոց հետ ուրիշ ոչ ոք կը մասնակցի:

Բայց երբ Բագրատունիք իրենց զուխը կ'անցնեն Հայաստանի թագը, իրենց մտաց մէջ կը զարթնուն նաև նոյն թագին հին իրաւունքները: Եւ Մաշտոցի մասին կը պատմուի՝ թէ անոր առաքինակրօն վարուց «հաճեալ հաւանեալ քաղապրե (Սրմբատ) և զահաւեհար իշխանքն և պատուական արք ազարք, ... կացուցին զնա յաթոռ ս. Լուսաւորչիս»³: Նոյն կերպով կ'ընտրուի նաև Մաշտոցի յաջորդն ու պատմիչը, «Թերևս ոչ կարացեալ դիմակ գոլ ձրամանի սրբային և կամ այլոց ևս նախարարակոյտ քազմարևանն»⁴: Արդեօք այդ ընտրութեանց մէջ եպիսկոպոսութիւնը բնաւ անման էր, թէ պատմիչը զանց կ'ընէ յիշել՝ ազնուականութեան հզօրագոյն ձայնին քով, որ աւելի ազդեցիկ կը հանդիսանայ նուաճելու ընտ-

րելոյն կամ ընտրելոց ընդդիմութիւնը:

Այդ հարցումն ըրի, որովհետև հետագայ օրինակաց մէջ սովորաբար անպակաս կը տեսնենք եպիսկոպոսաց մասնակցութիւնը թագաւորին հետ, մինչ ազատանին հազիւ երբեք կ'երեւի: Այսպէս 941ին Անանիա մոկացին կ'ընտրուի «հնաւորս, քեւտք սոցս, (որ են Գագիկ Արծրունի և Աբաս Բագրատունի թագաւորք), և սոցին քաջազան զարմիցն, և համարեն կոյսկոպոսաց և վանականաց և այլ ճգնաւոր մենաւորաց առաջնորդից հայցմանց և միսձայն բողոքմանց», ինչպէս կը պատմէ ընտրեալն ինքնին՝, և ուր կը պակսի ժողովուրդը միայն: Նոյնպէս 969ին քաղկեդոնական վահանիկ կաթողիկոսին դէմ «ժողովեցան կրօնաւորքն Հայոց ի քաղաքն Անույ, տէր Թաչիկ Արշարունեաց եպիսկոպոս, և հայր Պողիկարպոս կամրջաձորոյ վանական, և հայրն Սարգիս՝ Հոռոմոսի վանաց վանական, և հայր Ստեփանոս՝ Սևանայ վանաց վանական, և այլ եպիսկոպոսունք և հարք բազումք», որոց երկիրդէն վահանիկ փախաւ ի վասպուրական: «Իսկ ժողովն՝ կամակցութեամբ Առտոյ շահանշահի կաթողիկոս հաստատեաց Հայոց զՍտեփանոս վանական Սևանայ»⁵: Հոս կան կրօնականք ու թագաւորը միայն, և կը պակսին ազատանին ու ժողովուրդը:

972ին՝ «հրամանաւ թագաւորին որ (Աշոտ) Սղորմաձն կոչիւր՝ ժողովեալ ընտրեիցոց արևաց (որ կ'իմացուին ազնուականք) և կոյսկոպոսաց սրբոց, կացուցանեն յաթոռ հայրապետական» զԹաչիկ

1. Ասողիկ, Պարս, 1859, 111. — 2. Յ. ԿԲ. 161. — 3. Նոյն՝ 229. — 4. Նոյն՝ 230. — 5. Արրո. 1897, 129. — 6. Ասողիկ, 168.

Ա՛: 992ին « Գագիկ (Ա) արքայ Հայոց՝ կացոյց կաթողիկոս Հայոց զոտէր Սարգիս, . . . ժողով եպիսկոպոսաց արորեայ՝ որ յաշխարհէս Հայոց և որ ի Յունաց կողմանէն, որոց զլուս տէր. Սահակ՝ Արշա-րունեաց եպիսկոպոս՝: Այսպէս ընտր-րուեցաւ 1065ին Գրիգոր վկայասէր ալ, որոյ համար կարուց թագաւորը Գագիկ « ժողովքը զհարս Հայոց առ հասարակ, և միարան համակամութեամբ . . . յառաջ կոչեն զՎահրամ », որ փորձեց հրաժարիլ, և որոց « ամենեցուն բռնադատեալ » զայն, կու տան անոր Լուսաւորչի անունն ու աթորը: Այդ պահուն մեր թագաւորու-թիւնն ու հայրապետութիւն պանդուխտ են Յունաց տէրութեան մէջ. և յետ մահուան Պետրոս Գետադարձի՝ « թագաւորը Յու-նաց ոչ տային թոյլ դնել զոք կաթողիկոս, սակա անտոսջնորդ մնալոյ ազգիս մերոյ, և այնք աղաղակ յինքեանս դառնալոյ » եկեղեցական պառակտումէն: Գագիկ « բա-զում աշխատութեամբ » յաջողեցաւ կայ-սերէն հրաման ստանալ ընտրելու « զո և կամեցցին », փոխարէն շնորհելով անոր կարսի բերդը. և այդպէս ընտրուեցաւ վկայասէրը՝: Սա յետոյ 1070ին ուզելով միակեցական կենաց նուիրուիլ, և շլտե-լով թախանձանաց « թագաւորին և իշխա-նաց Հայոց », իւր հրաժարականը տուաւ « ցրագատարն Հայոց », որ էր նոյն Գագիկը, և անոր տեղ « ընտրեցցին զԳէորդ վար-դապետն », զոր ինքն իսկ ձեռնադրեց ակամայ. զի իրեն հետ պիտի երթար մե-նաստան, և իրեն առաջարկուած պատուէն հրապուրուած՝ դասալիք եղաւ: Գրիգոր մեկնեցաւ տիրած, բայց իւր ստացած խարկանքը չմարսեց. երկու տարի յետոյ դարձաւ, և հայրապետական աթորը յետ առաւ անոր ձեռքէն՝:

Այդ շրջանին աթորը կը գտնուէր Մու-տառասնոյ մէջ, որ յունահայ բռնակալ Փի-լաոտոս իշխանին ներքև էր, և ուսկից

կը խուսափէր վկայասէրը: Երբ Փիլաո-տոս ստիպեց զայն դառնալ իւր աթորը, Գրիգոր նամակաւ ինչդեց՝ որ իւր տեղ ձեռնադրել տայ Գետադարձի քեռորդին Սարգիս: « Յայնժամ հրամայեաց Փիլաո-տոսն իննի ժողով եպիսկոպոսաց և հարսնց վանականաց և կրօնաւորաց », որոնք 1076ին ձեռնադրեցին զՍարգիս Հոնի քա-ղաքին մէջ՝:

1079 թուին Բագրատունեաց տունը կը շիջանէր՝ սպանմամբ վերջին պայա-զատին: Յետ երկու տարւոյ Բարսեղ, ազ-գական վկայաստիրին, ուսկից Անուր եպիս-կոպոս ձեռնադրուած և հայրապետութեան խոստումն առած էր երբեմն՝, զնաց Ա-ղուանից ոստանը Լոռէ, և խնդրեց իւր իրաւունքը: Այն ժամանակ « ժողովեաց թագաւորն կորիկէ (զարմով Բագրատունի) զեպիսկոպոսոսն Աղուանից աշխարհին՝ Հաղրատայ մէջ, ուր եկաւ անոնց Ստե-փանոս կաթողիկոսն ալ, և « ձեռնադրե-ցին զոտէր Բարսեղ կաթողիկոս յաթոր սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշ-խարհին Հայոց », և նստաւ Անուր մէջ՝: Տարօրինակ ընտրութիւն մ'եղաւ այդ՝ առանց մասնակցութեան հայ եպիսկոպո-սաց, և մինչդեռ կենդանի էր վկայա-սէրը, և ի Հոնի կը նստէր Սարգսի յա-ջորդը թէ՛ողորոս, ընտրուած 1077ին՝: Հոնի 1085ին ընկաւ թուրքաց լծին ներ-քև, և Փիլաոտոս հրաւիրեց զթէ՛ողորոս իւր սահմանաց մէջ: Երբ նա չկրցաւ եր-թալ, իշխանը Մարաշի մէջ « արար ժողով եպիսկոպոսաց և հարսնց, և ետուն ձեռ-նադրութիւն կաթողիկոսութեան » վարա-գայի հօր՝ Պողոսի, որ քիչ օրէն ձգեց փա-խաւ՝: Այսպէս Հայք այդ պահուն ունե-ցան միանգամայն չորս կաթողիկոսներ¹⁰, հայրապետական աթորն անքնական կա-ցութեան մը մասնեղով:

Այդ բոլոր տեղեկութեանց մէջ բան մը կը նշմարենք. կաթողիկոսական ընտրու-

1. Կերակոս, Վենետիկ, 1865, 49. — 2. Ասողկ, 260-51. — 3. Սոփերք, ԺԳ, 17-18. Շնորհաւայ Բաճք յափաւ. Վենետիկ, 1880, 544. — 4. Մտթ. Ռուսա-

յեցի, Երսղմ. 1869, 280, 247. — 5. Անդ՝ 252-53. — 6. Սոփերք, ԺԳ, 29. — 7. Ռուս. 265-66. — 8. Նոյն՝ 254, 259. — 9. Նոյն՝ 275. — 10. Նոյն՝ 276.

թեանց մէջ առկա անյայտացունի ազնուական դասուն, և կեդրոնացունի եպիսկոպոսաց ու քաճախ նաեւ վանահարց պաշտօնայ, առնենալով իրենց հետ արքայական ու մերթ բռնացող իշխանի մը հաճութիւնն ալ, իսկ ժողովուրդը դեռ չի տեսնուիր: Այս է Բագրատունեաց շրջանի ընտրական նկարագիրը:

Ե. Կիլիկիան շրջան — Ոչ մի փոփոխութիւն կ'երևի հոս նախկին դրութեան վրայ, որ հաստատուն կը պահուի, այս ստորբերութեամբ՝ որ Բագրատունեաց դերը կը ստանձնեն Ռուբինեան պատկաւորը: Մեծն Լեոն 1193ին կը հրաւիրէ հայ եպիսկոպոսները Գրիգոր Քարապիժի ընտրութեան, ինչպէս կ'իմացնէ Լամբրոնացին, գրելով առ արքայն. «ձեր աստուած պաշտութիւնդ կոչեաց զմզդի մանուկ կաթողիկոսին ձեռնադրելն»: Բայց հագիւտարի մ'էր անցեր, նախանձոտ եպիսկոպոսն որ այդ մատող հասակը չէին հանդուրժեր տեսնել հայրապետական աթոռին վրայ ու խոնարհիլ անոր, մրով ծածկեցին զայն Լեոնի առջև, որ զայն փակել տուաւ բերդի մէջ, «մինչև քննութիւն լիցի ճշմարտութեամբ վասն նորա. և ինչն գրեաց թուղթս առ վարդապետս և եպիսկոպոսոնս Հայոց աշխարհին՝ եթէ զինչ կաժը իցեն նոցա վասն այսր»: Ժողով զամարուեցաւ, որուն կոչուած ու ներկայ էր դարձեալ Տարսուսի առաջնորդն ալ՝ թէ ինչ վճռեցին՝ յայտնի չէ. միայն թէ օր մը բերդին պարսպին ոտքը շտիջախուած գտնուեցաւ մանուկ կաթողիկոսին մարմինը, և ոճրին հեղինակներն անյայտ մնացին: Այս տեղ ուշագրաւը՝ հայրապետին վրայ Լեոնի ի գործ դրած իշխանութիւնն է, յարգելով նաև կզերին իրաւունքը:

Հոս վերստին կը պատակալի հայրապետական աթոռը: Յովհաննէս եպօ. Սոյո, որ գործակից եղաւ Քարապիժի բանտար-

կութեան մէջ, «զի ընտանի էր թագաւորին Լեոնի, բռնացաւ և կալաւ» անոր աթոռը՝ ընտրութեան կերպը սովորականն էր. «ժողովեաց թագաւորն Լեոն շատ եպիսկոպոս, և՛ ոչ ի կաթողիկոս» նոյն եպիսկոպոսը՝ Չայս երբ տեսաւ Սերաստիոյ առաջնորդն Անանիա, «չուզաւ նա առ սուլտանն՝ գոր Էռոտոց կոչեն: Ես նմա կաշառ, և նստաւ կաթողիկոս ի Սեւանս»: Ինք չկարօտեցաւ եպիսկոպոսաց ժողովին, որոյ տեղը բռնեց այլադեմին իւր խթած դրամներուն ժողովը: Այդ պահուն երբորդ կաթողիկոս մ'ալ Աղթամարի մէջ կը նըստէր, Դա էր Դաւիթ ժագմամը Արծրունի, որ 1118ին՝ երբ վախճանեցաւ Բարսեղ կաթողիկոս, «աբարեալ ժողով կպիսկոպոսաց հնգից, ձեռնադրեցաւ կաթողիկոս», իրեն երեւակայական իրաւունքներ ընծաւ յելով: Բայսդի օրինաւոր յաջորդը Գրիգորիս այդ գայթակղութեան առաջնն առնելու համար՝ Սեաւ լերան վրայ զուժարեց 2500 եպիսկոպոսաց ու հարց ժողով մը, և մերժուած հուշակել տուաւ աղթամարցիքը, «անէծս ցաւագինս կուտեալ ի գրուլուխ նոցա»: Ինչպէս կը տեսնենք, թէ Յովհաննէս և թէ Դաւիթ ընտրութեանց մէջ՝ եպիսկոպոսաց ժողովն է գործողը, մին թագաւորին հետ, և միւսն ինքնազուլու և առանձին. ինչպէս Դաւիթ յաջորդներէն՝ զՉաքարիա ընտրողն ալ էր «եպիսկոպոսաց, վարդապետաց և բազում կրօնաւորաց» ժողով մը¹⁰:

Սակայն դեռ մեր իշխանք ալ կ'երևին երբեմն ընտրութեանց մէջ, երբ կը պակասի թագաւորը: Այսպէս 1220ին՝ յետ նոյն Յովհաննէս մահուան, «ժողովեաց կպիսկոպոսոսն և վարդապետսն՝ խորհեցան հաստատել կաթողիկոս Հայոց: Իսկ իշխանքն երկպառակեցան, զի արքայ ոչ գոյր՝ որ նորա կամօքն կացուցանէին: Իսկ պարոն կոստանդին պալլն տէչը կոստանդին բարձրերբրցլին կամէր, և պարոն կոս-

1. Գր. Տղայի 644. Վճնտրիկ, 1865, 224. — 2. Կիրակ. 69. — 3. Գր. Տղայ, 224. — 4. Կիրակ. 69. — 5. Նոյն՝ 70. — 6. Սմբատ, Պարիս, 1859, 114. —

7. Կիրակ. 70. — 8. Վարդան, Վճնտրիկ, 1862, 116. — 9. Ծնորդաւայ Նամակեթ, Վճնտրիկ, 1888, 134. — 10. Թով. Արթր. Կ. պուլս., 1852, 363.

տանդին լամբրոնացին՝ զԳրիգոր վարդապետն սկեռացին, Եւ Աստուած՝ որ յամենայն ժամ լսէր կոստանդին պայլոյն Հայոց, և այժմ լուաւ, և եղին զտէր կոստանդին բարձրերգոցին կաթողիկոս Հայոց՝։ Ուր կը տեսնենք՝ թէ եպիսկոպոսաց ժողովն աւելի հաւանող է պայլին առաջարկածին՝ քան ազատ ընարող։

1268ի յիշատակարանն մը կը գրէ՝ թէ «ի շնորհացն Աստուծոյ և հրամանաւ թաթաւորին Հեթմոյ՝ յաջորդէ զաթոն տէր Յակոբ (Ս), այլ բարի և վարդապետ հին և նոր կոստակարանաց, անապատական վարուք ճգնեալ՝։ Բայց ընտրութեան մասնակցեր էր սովորական ժողով մ'ալ արեւելիքն ու կիրիկիայն՝ ըստ օրիշ վկայութեան փք՝։ Յակոբ վահրանիւով 1286ին, «մեծաւ հանդիսիւ և աշխարհաժողով ամբարիւ նստուցանեն կաթողիկոս Հայոց» զկոստանդին Բ, «ձեռամբ թագաւորին Հայոց Լևոնի՝ որդւոյն Հեթմոյ, ընդ որս և մեր նուաստութիւն», կ'ըսէ Օրբելեան՝։ Նոյն արքայի որդին ու յաջորդը Հեթմոմ Բ կը թշնամանայ հայրապետին հետ. «տանէ ինքեան խորհրդակից յեպիսկոպոսաց և յիշխանաց զխաւորագոյնան, նաև ի վարդապետաց իսկ», և անոնց հետ «տանէ ժողով» ու կը հրաժարեցնէ զկոստանդին 1289ին։ Ապա յաջորդին ընտրութեան կը հրաւիրէ նոյն պատմիչն ալ, որ չհաւանելով հրաժարելոյն եղած անխրաձութեան՝ կը մերժէ երթալ։ Նուիրակն երբ կը դառնայ, կը գտնէ արդէն «հաստատեալ յաթոռ կաթողիկոսութեան զՍտեփանոս»։ Նոյն գրիչն իւր ժամանակագրութեան մէջ ալ կ'ըսէ՝ թէ «Բ ձեռն թղթոց մեծապատիւ արամբք հրաւիրեցին զմեզ և զայլ եպիսկոպոսոսան և զայլ իշխանս արեւելից՝ երթալ ի թագաւորութիւնն մեր ի Սիս՝ յընտրութիւն նորոգ հայրապետին»։

Ստեփանոսի մահուամբ՝ 1296ին «զարձեալ առնէ ժողով թագաւորն Հեթմոմ, և տայ ձեռնադրել կաթողիկոս Հայոց զտէր Գրիգոր՝ Անաւարզայ եպիսկոպոս»։ Այսպէս նաև 1322ին «զբին կաթողիկոս հրամանաւ թագաւորին Լևոնի և շատ եպիսկոպոսաց՝ զՍոսոյ եպիսկոպոսն տէր կոստանդին լամբրոնացին»։ 1340ին «թագաւորն Լևոն ընկէց զտէր Յակոբ կաթողիկոսն», անկից յանդիմանուած լինելուն համար. «և եղ փորսն նորա զեպիսկոպոսն Գոնեբրուն զտէր Մխիթարն»։ անշուշտ գործակցութեամբ ժողովոյ՝ ըստ սովորութեան։ վասն զի նոյն կաթողիկոսը 1355ին վերստին կը բազմի աթոռը՝ հաւանութեամբ կոստանդին արքայի և եպիսկոպոսաց¹⁰։

Ամփոփելով այդ օրինակները, կիրիկեան շրջանիս մէջ հայրապետական ընտրութիւնը կը կատարուին միշտ եպիսկոպոսաց ժողովէն և հաւանութեամբ արքային, որ յաճախ ինքն իսկ կ'առաջարկէ ընտրելին, և ժողովը կը հաւանի։ Երբեմն կը մասնակցին իշխանք ալ, մինչ ժողովուրդը զեռ ընաւ ձայն չաւել։

Չ. Ընտրութիւն իւր յայրգիւն. — Եղած են առիթներ՝ ուր արքեպիսկոպոսը իրենց վախճանելէն յառաջ նշանակեր են իրենց յաջորդը։ Այսպէս Աղեքսանդր՝ մեարսպոլիտ Աղեքսանդրիոյ, 328ին օրհասի պահուն իրեն իբր յաջորդ մասնանշեց զսուրբ Ամնաս, զոր յետոյ ժողովուրդը վաւերացուց և եպիսկոպոսունք ձեռնադրեցին¹¹։ Այդ վերջինը նոյնպէս իրեն յաջորդ նշանակեց և կղերին ա ժողովրդը զեան հաւանութեան յանձնեց զԳիկոն կամ Պետրոս ցահնայ¹²։ Բայց այս եղանակը, որ տեսակ մ'որոնձգութիւն էր հասարակաց իրաւանց մէջ, հաճոյ չթուեցաւ Եկեղեցւոյ հարց, և 341ին Անտիոքայ ժողովն արգելեց զայն (կան. ից)¹³։

1. Տարեգրք կիրիկ. գրէ. Բ. 1308. Ս. Ղըր. էջ 316. — 2. Հատարան յարեց. գրէ. ի Ս. Ղըր. — 3. Սխառւ, 249. — 4. Ստեփ. Սիւնեաց եպո, Մտփոս, 1861, 319. — 5. Նոյն՝ 320-22. — 6. Հանք. սան. 1921, 180. — 7. Ստեփ. Սիւն. 326. —

8. Սմբատ՝ 130. — 9. Ժմեցիր. պատ. կիրիկոյ, գրէ. Բ. 1318 Ս. Ղըր. էջ 262. — 10. Չմբ. Գ, 363. — 11. Սողոմոն, Բ, 47. — 12. Հմտ. Cabrol, Dict. d'archéol. IV, 2621. — 13. Pitra, I, 462.

Նոյնը կ'երևի նաև մեր քով, և աւելի յաճախ իսկ: Մեք տեսանք ս. Յովսեփոս ընտրութիւնն իշխանաց ձեռքով՝ ըստ վրկայութեան ժամանակագրին՝ իսկ Փարպեցիին անոր հայրապետութիւնը կը զնէ «հրամանաւ երանելոյն Մաշտոցի»՝ իւր նախորդին. տեղեկութիւն՝ զոր կ'առնու կը կրննէ խորհնացին ևս, «հրամանաւ երանելոյն Մեսրոպայ»՝ էթէ պատմական է այդ, ուրեմն իշխանք կատարեցին պարզապէս վարդապետին վերջին փափաքը: Միջին դարուն աւելի կ'երևի գործադրուած այս ընտրական եղանակը: Վահան 968ին հայրապետ կը կարգուի «հրամանաւ Անանիայի (իւր նախորդին), Յովհաննիսի և Աշոտյ Հայոց թագաւորացն», կ'ըսէ Ուռհայեցի¹, սխալելով գոնէ այդ երկու հարազատից մասին, որոնք թագաւորեցին 1020ին. որով պէտք էր ըսել Աշոտ Գ որդեմածի, ինչպէս կը զրէ Սիւնեաց պատմիչը, ըսելով՝ թէ այդ ընտրութեան համար «առնէ ժողով եպիսկոպոսաց և հարց»։ Վահանայ յաջորդին՝ Ստեփանոսի համար կը պատմէ Ուռհայեցի՝ թէ «նստուցանեն զնա հայրապետ Հայոց՝ հրամանաւ և օրհնութեամբ տեառն վահանայ»։ Նոյն Ստեփանոս՝ չմոռած «ձեռնադրեաց յաթոռ իւր գերանելին տէր իսաչիկ» Ա՛, Սա ևս «ձեռնադրեաց յաթոռ իւր գտէր Սարգիս»։ Նոյնպէս «ձեռնադրի տէր Պետրոս (Գեոտաղարձ) ի կաթողիկոսութիւն առ կենօքն տէր Սարգսի» և անոր ձեռք իսկ՝ Յետոյ Նոյն Պետրոս «անուանեաց յաթոռ հայրապետութեան իւրոյ զամենագովելին գտէր իսաչիկ» Թ իբրև օգնական իրեն, զոր ապա վախճանելէն յառաջ ալ «ձեռնադրեաց յաթոռ հայրապետութեանն»։ Եւ ի Հոնի՝ Սարգսի տեղ «հրամանաւ նորա նստուցանեն» գթէողորոս²։

Այս տեղեկութիւնը կը վերաբերին 968-

1077 տարիներու շրջանին, մինչ իրենց զլիաւոր ազբիւրը Մատթէոս կը զրէր իւր 1136ին՝ Հետևորար իւր բոլոր ըսածներուն ստուգութիւնը չենք կարող երաշխաւորել: Ընդ հակառակն աւելի հաւաստի օրինակներ ունինք յաջորդի ընտրութեան՝ Պահլաւունեաց մէջ: Անոնց առաջինը Գրիգոր վկայասէր մեծն՝ տարօրինակ ընթացք մ'ուէի այս մասին: Նախ իւր Գրիգորիս ընտրողին «ձեռնադրէր կաթողիկոս Եգրատոսի», ուր ինք զնացեր էր այցելութեան զոհացնելու համար զխալիֆայն՝ որ զինք սիրելուն կ'ուզէր հոն պահել, ու կը դառնայ ի Հայաս Եւ որովհետև անպատասէր էր, իւր Բարսեղ անուն ազգականը, կանխա ինքնազուլիս կաթողիկոս նստած Անույ մէջ³, «կարգէր փոխանակ իւր հովիւ և վերատեսուչ Քրիստոսի հօտին», այսինքն իբրև տեղապահ, անոր թնակավայր նշանակելով Շուղը: Երկու ընտրութիւնը ալ կը կատարէ իւրովի, առանց ժողովոյ: Ինք կ'առաջարկէ նաև իւր միւս փոխանորդը Հոնույ մէջ⁴: Միանգամայն Բարսեղ խնամոց կը յանձնէ իւր երկու ընտրողները Գրիգորիս ու Ներսէս, և «պատուիրէր սնուցանել զնոսազգուշութեամբ»... լինել ժառանգ սրբոյ աթոռոյն⁵։

Բարսեղ յետոյ վկայասիրին մահուամբ յաջորդեց անոր⁶, Եւ ինքն ալ իւր մեռնելէն յառաջ «զնայր յեկեղեցին», և Գրիգորիսի վրայ կ'առատարէ հայրապետական կարգը, այսպէս ի գլուխ տանելով վկայասիրին կտակը⁷: Առ այս հրաւիրած էր «զեպիսկոպոսունս և զվանորեայս երկրին և զիշխանսն», որոնք չհասած՝ ստպուեցաւ փութացնել ձեռնադրութիւնը, իրեն պատահած արկածի մը պատճառաւ՝ որ զինքն արագ գերեզման տարաւ⁸։

Գրիգորիս յիսուն և չորս տարի վառելով իշխանութիւնը, ձերացած ու խօթ,

1. Աստ՝ 8. — 2. Փարպ. 106. Խորհ. Գ, 44. — 3. Ուռ. 40. — 4. Ստեփ. Սիւն. 211. — 5. Ուռ. 41-42. — 6. Նոյն՝ 47. — 7. Նոյն՝ 49. — 8. Սրբ. 1. Կատիվորացի՝ 8. Վարդան՝ 98. — 9. Ուռ. 122,

152. — 10. Նոյն՝ 269. — 11. Աստ՝ 107. — 12. Անց՝ — 13. Սոփեթք, ԺԲ, 28, 29, 30. Շնորհ. Բաճք յոփա, 550. — 14. Սոփեթք, 80-81. — 15. Անց՝ 82. — 16. Վարդան՝ 116. Ուռ. 411.

իւր հարազատը Ներսէս «ստիպէ առնուլ զատուածընկալ աթոռոյ իւրոյ փոխաւ, նորոգութիւն»։ Եւ առ այս ժողով կը խմբէ, որուն կը մասնակցին զգաւք սրբազանից քահանայապետաց և քահանայից և իմաստուն վարդապետաց՝ վկայութեամբ ընտրելոյն՝ կամ ըստ պատմչին՝ «կոչեաց զեպիսկոպոստունս և զվարդապետս և զհարս սրբոյ լերին» (Սեաւ կոչուած) և զորս յայլ կողմանց, առանց մասնակցութեան աշխարհականաց։ Ներսէս յետ երկար գիմաղրութեան տեղի տուաւ եղբոր ու ժողովին ստիպման։ Ապա ծերունի հայրապետն անձամբ կաթողիկոս ձեռնադրեց զայն, և ինքն յետ երեք ամսոյ առ Աստուած փոխեցաւ¹։

Գրիգորիս ոչ միայն իւր, այլ իրեն պէս ծերութեամբ դուռը հասած եղբոր յաջորդն ալ նշանակած էր կանխաւ. որոյ «անդարձ կտակն հաստատեալ պահելու» իւր եղբորըրդին Գրիգոր Տղայն «կատարել փոխանորդ (այն է յաջորդ) եղբոր իմոյ տեսնն Ներսիսի», կ'ըսէ Գրիգոր յիշատակագիրը 1173ին՝ ի հաստատութիւն ազոր՝ նաև Շնորհալին իւր մահուան ժամանակ զգրէր ի կտակն իւր և պատուէր տայր նստուցանել յաթոռն նորա զորդի եղբորն իւրոյ երեցագունի վասիլի, զարքեպիսկոպոստն տէր Գրիգոր՝ մականուն Տղայ. որ և արարին իսկ ըստ իւրում հրամանի՝ և կտակներէզ զատ՝ «նաև ըզլաւութիւն բարուցն և զսրբութիւն անձինն տեսնալ, իբր ի հրամանէ Աստուծոյ ժողովիալը», «ի հաւանութենէ բոլոր ազգիս եպիսկոպոսաց սրբոց, հարց և վարդապետաց, վանականաց և աշխարհայնոց, զօրականաց և զօրապետաց», «հաստատեցին զնա յաթոռ վերականցութեան՝ բազում իւրախութեամբ և մեծ հանդիսիւ», կը յարէ Գրիգոր յիշատակագիրը, և կը հաստատէ լամբրոնացին². և ուր հաւանող ժողովը կազմուած է եկեղեցականներէ և աւագանիէն միանգամայն։

Այսպէս ուրեմն յաջորդին ընտրութիւնն այդքան ընդարձակ է մեր մէջ միջին դարուն, և վկայատարի նշանակած մասնակաւ տեղապահներէն զատ, միւսերն ազատաց կամ եկեղեցական ժողովոց հաւանութեան ալ ենթարկուելու են միշտ ընտրողաց կողմանէ, առանց սակայն մերժուելու քնաւ։ Այս դրութիւնն աւելի հաստատուն հանգամանք առած էր Ալթամարայ և Աղուանից աթոռներու վրայ՝ Սոսոյ 1342ի ժողովոյն ժամանակ, որ կը վկայէ՝ թէ առնոց «ընտրն զյաջորդս իւրեանց. բայց ոչ առ կենդանեաւ նոցուն ձեռնադրին ընտրեալքն, այլ զկնի մեռանելոյն»։

Է. Եղանակ ընտրութեան։ — 1. Ընտրական ժողովը խմբուած համար՝ հարկ էր նախ հրապարակ ժողովականները։ Եւ հրապարակը կը լինէր թագաւորը, իշխանապետը, կամ հայրապետը՝ որ պիտի ընտրէր իւր յաջորդը, ինչպէս նկատեցինք վերոյիշեալ օրինակաց մէջ։ Գ Սոսեփանոսի ընտրութեան համար՝ Հեթում թեթագաւորն ու ժողովը նուիրակ կը յղեն Սոսեփանոս սկեռացին՝ հրապարակեալ նամակոց, կոչելու արևելեան եպիսկոպոսներն ու իշխաններն³։ Նոյն թագաւորը 1293ին՝ Գրիգոր անաւարդեցոյ ընտրութեան համար կը խորհրդակցի եկեղեցոյ ուխտին և իշխանաց հետ. և ևս առաքեն զմահուաստութիւն. — կը զրէ զազգաբնակցին թորոս զրիչ, — և զսրբելի և զաննդակից եղբայրն իմ զպատուելի եպիսկոպոս տէր թումաս՝ յաշխարհն արևելից, առ ի մեծարանս եպիսկոպոսաց և իշխանաց, զալ վերստին նորոգել զաթոռ սուրբ Լուսաւորչին», զոր և կը կատարեն⁴։

2. Ընտրող ժողովոյն նախագահ կը բազմէր՝ Արշակունեաց շրջանին՝ թագաւորը, երբ ժողովն ազատանիէն միայն կը կազմուէր⁵։ Անոր յաջորդող շրջանին, յորում նախարարը և եպիսկոպոսունք խառն կը զուտարուէին¹⁰, թէ ո՞վ կը նախագահէր՝ յայտնի չէ մեր ունեցած տե-

1. Շնորհ. Նամակ. 12, 5. — 2. Սոփեթ. 66. — 3. Տորեգիրք Կիլիկ. դեր. — 4. Հաւաք. յրգ. 1173, 1174. — 5. Գովգես Ի Շնորհ. զր. Ս. Ղ. զր. — 6.

Mansi, XXV, 1258. — 7. Սահ. Սիւն. 821-22. և սոս՝ 13. — 8. Հաւաք. յրգ. 1291. — 9. Սոս՝ 84-85. — 10. Սոս՝ 88, 89.

ղեկութեանց մէջ, Բագրատունեաց տէրու թեան օրով ժողովոյն և նախագահութեան հանգամանքներն երթալով կը պարզուին: Հող մեր թագաւորը հետ զհետէ ձեռնպահ կը մնան եպիսկոպոսաց ժողովէն, և կը շատանան՝ անոնց ընտրելոյն տալով իրենց հաւանութիւնը. իսկ ժողովոյն կը նախա- գահէ եպիսկոպոսներէն պատուաւորագոյնը: Որով 968ին զվահան և 969ին ալ զՍտեփանոս ընտրող զուամբմանց մէջ՝ «էր զլուս ժողովոյն կաթողիկոսն Աղուս- նից տէր Յովհաննէս» և 992ին Սարգսի ընտրութեան գահազուլու բազմաձէ էր Ար- շարունուաց եպիսկոպոսը Սահակ՝ Նոյն զրուիթիւնը կը շարունակէ նաև Ռուբի- նեանց ժամանակ, ժողովոյն անդամը ու նախագահ՝ եկեղեցականը էին. և անոնց ընտրածը կը վաւերացնէր յետոյ թագա-ւորն իւր աւագանւոյն խորհրդով, ինչպէս կը տեսնենք ընդ հուպ Սոյ 1342ին ժող- վոյն վրայութեան մէջ: իսկ իւր յաջորդի ընտրութեան կը նախագահէր կաթողիկոսը՝ երբ գործը կը կատարուէր իւր կենդանու- թեանը, ինչպէս տեսանք օրինակներով:

3. Ինտրելին կ'առաջարկուէր մերթ թա- գաւորին կամ իշխանապետին կողմանէ. ինչպէս Լուսաւորիջ՝ Տրդատէն, Յուսիկ Բ՝ Փպչէն, Արթանամ՝ Սմբատէն, Գրիս- ապօրը՝ Թէոդորոսէ, Յովհաննէս Դ՝ մեծն Լևոնէ, Կոստանդին Ա՝ իւր անուանակից պայլէն, և այլն՝: Երբեմն ժողովականը կը պահանջեն ընտրելին համախումբ, ինչպէս եղաւ ս. Յուսիկան, Դանիելի, Ներսիսի՝ և այլոց, անշուշտ կանխաւ գոյացած հա- մաձայնութեամբ իրարու հետ իսկ հայ- բապետաց կողմանէ առաջարկուած փո- խանորդներն ու յաջորդներ յառաջագոյն ալ նշանակուած էին միշտ:

4. Կլիկիա արևմտեան ազդեցութեան ներքե կը փորձէ բարւորութիւնը մուծանել ընտրութեան նախկին եղանակին մէջ: Կա- թողիկոսորհնէքը, զոր շարադրեց Ներսէս Լամբրոնացիին՝, այսպէս կը սահմանէ. «Յորժամ հանդերձեալ լինին բարձրացու-

ցանիլ զոր ի պատիւ կաթողիկոսութեան տանն Հայոց, նախ ընտրել պարտ է ըստ կաթողիկէ կեկեղեցեացն սահմանի», որ է միւս քրիստոնէից նման: «Քրտը ժողո- վուրդը հայասեռ ազգիս՝ հանդերձ ամե- նայն ժառանգաւորօքն եկեղեցւոյն և երկու տասան եպիսկոպոսօք՝ ընտրեն ի նոցանէ երիս արտ», այսինքն մասնակցող եպիս- կոպոսներէն երեք հոգի: «Եւ քննութեամբ ժողովոյն» — որ զատ է երից ընտրողնե- ըն, և անշուշտ կազմուած եպիսկոպոս- ներէ, — ընտրեն զի ի նոցանէ վկայեալ յամենայնի ի գործս բարիս, և ի վարս առաքինիս սուրբ և անարատ, գիտու- թեամբ և իմաստութեամբ լի, որ կարող իցէ հովուել զժողովուրդն որ յԱստուծոյ հաւատասցի նմա»:

Պէտք է գիտնալ՝ որ երբ Տարսնի ա- ռաջնորդն այս սահմանը կը շարադրէր, տակաւին Ռուբինեանց թագաւորութիւնը չէր սկսած Այս պատճառաւ ընտրութեան համազգային ձե մը տուած նա, որ եր- բեք չզործադրուեցաւ. և «քրտը ժողո- վուրդը հայասեռ ազգիս» չեն տեսնուիլ կլիկիեան շրջանիս ոչ մէկ ընտրութեան մէջ, ինչպէս կը վկայեն նոյն և յաջորդ դարերու օրինակները: 1198ին պատկաւե- ցաւ առաջին Ռուբինեանը՝ Լևոն, որ թէ ինք և թէ յաջորդները ձեռք առին հայրա- պետաց ընտրութիւնը՝ զործակցութեամբ եպիսկոպոսաց ժողովոյն, և «ժողովուրդը» մտացուած քնացին՝ ինչպէս յատալ:

5. Մեր հին մատենագրութեան մէջ զոյութիւն չունին, և անգիր աւանդութիւն կամ լոկ թուիք մ'էր անշուշտ այն «հա- նոճը», որ Չաւոյնեանի «Թուէր» տաճա- նուած 1114ին զաղթամարցիս բանադրող ժողովէն, — և զոր կրկնեցին Ինճինեան, Հ. Ալիշան, Մսերեանց և այլք հո՝, — թէ «յընտրութեան կաթողիկոսի լեցի միա- ձայն հաւանութիւն չորից գլխաւոր աթո- ռոց արքեպիսկոպոսաց որ ի մեծ Հայքս, այսինքն են Բշնոյ, Հաղբատայ, Թաղէ- ոսի վանաց՝ որ յԱրտազ, և Ստաթեալ

1. Ուս. 40, 42. — 2. Աս.՝ 107. — 3. Աս.՝ 4, 5, 8, 9, 108. — 4. Աս.՝ 4. — 5. Բագով. 1929, 886.

— 6. Գր. Ս. Ղազար. Բ. 1178 նն. — 7. Ճմտ. Բագով. 1902. 556.

կամ Տաթևու. և եղաւ վճիռ՝ զի առանց հաւանութեան սոցա անվաւեր լինի ընտրութիւնն՝: Այսպիսի վճիռ չէ տրուած երբեք. ինչպէս ձրի էր Օրբեկեանի պահանջն ալ՝ թէ «առանց սոցա (այսինքն եպիսկոպոսաց Սիւնեաց) ոչ ձեռնադրի պատրիարք Հայոց, և ոչ լինի ժողով (ընտրութեան), այլ զլուր և հրամանատար ժողովոյ սոցա լինին»։ Պատմչիս օրով իսկ և առանց իւր ներկայութեան — մանաւանդ մին իւր կամաց հակառակ իսկ — ընտրուեցան Ստեփանոս Դ ու Գր. Անաւորգեցիին, և ընտրութիւնը հաւասարապէս յաջող ու վաւերական եղաւ։

6. Այդ զրոյցներէն և փոփոխութիւններէն աւելի իրական ու հետաքրքրական է Ասոյ 1342ի ժողովին տուած տեղեկութիւնը՝ թէ «յետ Պահու կաթողիկոսին՝ արքունի հրամանաւ ժողովին արքեպիսկոպոսը, եպիսկոպոսունը, վարդապետը, հարք ուխտից և աւագ երիցունը», որոցնէ դուրս կը մնան միշտ կաթողիկոսօրհնէից «ժողովուրդը»։ «Եւ իւրաքանչիւր ի նոցանէ տայ զանուն ոյր ուրուք և կամ յեպիսկոպոսաց կամ ի վարդապետաց կամ ի հարք ուխտից կամ ի կրօնաւարաց», և ոչ լով «եպիսկոպոսաց» դասէն՝ ըստ կաթողիկոսօրհնէից. «և զանունանս զրով տան թագաւորին ընդ կնքով իւրեանց։ Եւ եթէ թագումը իցեն վիճակեալքն, հրամայէ արքայն միաբանել ի վերայ երկուց կամ երից», համաձայն կաթողիկոսական կարգին։ «Եւ ապա արքայն ընդ իւրում ժողովոյն (խորհրդական իշխանաց) ընտրէ զմի յերեցունց անտի զոր և կամի»։ Ինչ որ եպիսկոպոսական ժողովը պիտի ընէր ըստ կաթողիկոսօրհնէից։

7. Երբ ընտրութիւնը դժուարութեանց կը բախէր, երբեմն խնդիրը կը ջանային լուծել վիճակով, նմանութեամբ առաքելոց՝ զոր տեսանք։ Արքահամու ընտրութեան ժամանակ՝ 607ին՝ երբ նա կը հակառակէր ընդունել պաշտօնը, ապաւինեցան այդ կերպին, «արկիւտ վիճակ ըստ սովորութեան իւրեանց. և էր վիճակ աւետարանին այս. իջի ես յերկնից՝ ոչ (զի)

զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ որ առաքեալն զիս»։ այսինքն թէ աւետարանի վրայ վիճակ ձգեցին և ելաւ այդ խորհրդաւոր խօսքը, որոյ ի տես Արքահամ «հաւանեալ և հաստատեալ ի միտս իւր, ձեռնադրի ի շնորհաց սուրբ Հոգւոյն»։ Տեղեկատու թէ է և ուշ, բայց տեղեկութիւնը հաւանական կը թուի։ Ձի նոյնը պատահեցաւ նաև Կիրակոս վիրապետոյ ընտրութեան առթիւ՝ 1441ին։ Շատերուն առաջարկուեցաւ աթորը, կ'ըսէ Մեծոփեցին, և մերժեցին։ «Ապա յետ այնորիկ ապաւինեցար յԱստուած, և միաբանութեամբ սկսար աղօթիւք և պաղտանաօք խնդրել յԱստուծոյ՝ տալ մեզ առաջնորդ ըստ կամաց իւրոց»։ Յետ որոյ «արկին վիճակ ի սորբ անտարան, և ել վիճակն Կիրակոս հայրապետին. և առանց հակառակութեան եկեալ կանգնեցաւ ի մէջ ահագին ատենին»։ Ընտրութիւնը յաջողած էր։

8. Ծնորդաւին գեղեցիկ ատենարանութիւն մ'ըրաւ ու թողուց զինքն ընտրող ժողովին առջև, յորում կ'ակնարկէր իւր սոհմին. կը ներքողէր իւր հարազատին ու նախորդին կեանքը. կը ցուցնէր իւր անարժանութիւնը բազմալու հայրապետական աթորին վրայ, և թէ բռնադատեալ կ'ընդունէր զայն, ապաւինած ընտրող ժողովականաց աղօթից՝ Սովորական չէին անշուշտ այսպիսի ատենարանութիւնը, և քիչ են օրինակները, հանգամանօք ալ տարբեր։ Յիշեցինք Դանիելի խօսածը, որ կշտամբական էր, իրեն առաջարկուած պաշտօնէն խուսափելու խօսքը։ Նոյնպիսի էր Ներսիսի խօսածն ալ, միանգամայն շեշտելով իւր անարժանութեան վրայ¹⁰։ Ուրիշ ատենախօսներ ալ եղած են հաւանօրէն, բայց չեն յիշուած։

(Շարունակելի) Զ. Վ. ՀԱՅՏՈՒՆ

1. Չամբ. Գ, 87. — 2. Ստեփ. Սիւն. 18. — 3. Աստ՝ 109. — 4. Manzi, XXV, 1268. — 5. Աստ՝ 82. — 6. Ռեւանդու, Բ, 16. — 7. Այրարատ Զ. Աւեր. 216. — 8. Նամակ, 5-28. — 9. Աստ՝ 84. — 10. Փաստ. 38-41. — 11. Նոյն՝ 69-70.

